

ՀՏԴ՝ 811.19

ՆԵՐԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ՏԱՐԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆ ԱԾԱԿԱՆՆԵՐԻ
ԻՄԱՍՏԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ

(Համաժամանակյա և տարժամանակյա հայեցակետ)

Հայիկ Խաչատրյան, Մարգուշ Միրումյան

Երևանի Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ

Բանալի բառեր՝ ներխոսքիմասային տեղաշարժեր, տարարժեքություն, համաժամանակյա տարարժեքության, տարժամանակյա տարարժեքության, լիակատար տեղաշարժեր, մասնակի տեղաշարժեր:

Սույն հոդվածում բառույթի ներխոսքիմասային տարարժեքությունը քննվում է ածականների իմաստային կառուցվածքում. ընդ որում՝ երևույթը դիտարկվում է երկու կտրվածքով՝ *համաժամանակյա*, որի դեպքում ածականները լեզվի նույն գոյավիճակում համատեղում են տարբեր կարգային նշանակություններ, և *տարժամանակյա*, որի դեպքում ածականները լեզվի տարբեր գոյավիճակներում հարաբերակական տեսակից անցել են որակականի շարքը:

Նախաբան. Լեզվի ներբառության իրողություններից է բազմիմաստությունը, որ դրսևորվում է ինչպես բառական, այնպես էլ քերականական մակարդակում: Բառական բազմիմաստությունը դրսևորվում է միևնույն բառույթի իմաստային կառուցվածքում, որի հետևանքով տվյալ բառական միավորը ցուցաբերում է ներբառության բազմիմաստություն¹: Քերականական բազմիմաստությունը դրսևորվում է միջխոսքիմասային և ներխոսքիմասային հարթություններում: Միջխոսքիմասային բազմիմաստությունն առաջ է բերում ձևաբանական տարարժեքություն, որի դեպքում միևնույն բառույթը, պայմանավորված բառաքերականական երկատված իմաստներով, հանդես է գալիս մեկից ավելի ձևաբանական արժեքների համատեղումով²:

¹ Տե՛ս **Խաչատրյան Լ.Մ.**, Լեզվաբանության ներածություն, Եր., 2008, էջ 139-140:

² Խոսքիմասային տարարժեք բառերի ձևավորման ուղիների մասին, տե՛ս **Խաչատրյան Լ.Մ.**, Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, Եր., 1985, էջ 20-26: **Խաչատրյան Լ.Մ.**, Խոս-

Ներխոսքիմասային բազմիմաստությունը ներկարգային տեղաշարժերի միջին օղակն է, որի ժամանակ միևնույն խոսքի մասը կարող է համատեղել մեկից ավելի ներկարգային նշանակություններ: Վերջին իրողությունը դիտարկելի է ինչպես նյութական, այնպես էլ սպասարկու խոսքի մասերի ներսում: Գոյականի ներսում այդպիսի համատեղում նկատելի է հատուկ և հասարակ տեսակի կամ հոգնակի և հավաքական թվի միջև, բայի ներսում՝ սեռային իմաստների միջև, անականի դեպքում՝ որակական և հարաբերական տեսակների միջև, նույնը կարելի է դիտարկել մակբայի տարբեր տեսակների միջև և այլն³:

Ներխոսքիմասային տեղաշարժերը կարող են բնութագրվել անցման լիակատար բնույթով, որի դեպքում միևնույն խոսքի մասը կարող է իր կարգային նշանակությունից անցնել մեկ այլ նշանակության: Վերջին հանգամանքը կրում է տարժամանակյա բնույթ. կարգային նշանակության փոփոխությունն արձանագրվում է լեզվի պատմության ընթացքում, որ իր հերթին պայմանավորված է իմաստափոխական որոշակի գործոններով: Այդ նույն գործոնների հետևանքով է բառույթի կարգային նշանակությունը երկփեղկվում (լեզվի համաժամանակյա կտրվածքում). հետագա զարգացումը կարող է հանգեցնել այն բանին, որ վերանա բառույթի կարգային երկատվածությունը, և նրա իմաստային կառուցվածքում տիրապետող դառնա կարգային մեկ այլ նշանակություն (լեզվի տարժամանակյա կտրվածքում):

Սույն հոդվածում բառույթի ներխոսքիմասային տարաբժեքությունը քննելու ենք անականների իմաստային կառուցվածքում. ընդ որում՝ երևույթը դիտարկելու ենք երկու կտրվածքով՝ *համաժամանակյա*, որի դեպքում անականները լեզվի նույն գոյավիճակում համատեղում են տարբեր կարգային նշանակություններ, և *տարժամանակյա*, որի դեպքում անականները լեզվի տարբեր գոյավիճակներում հարաբերական տեսակից անցել են որակականի շարքը:

Ելնելով այն հանգամանքից, որ ուսումնասիրության առարկա են հարաբերական անականները (և նրանց իմաստային փոփոխությունները), բնականաբար դիտարկվելու են անանցավոր կազմությունները: Հարաբերական անականների արտահայտության պլանում անանցները միանշանակ բառակազմական նշանակություններ չունեն, որոնք իրենց հերթին պայմանավորում են ներկարգային տեղաշարժերի գործընթացները⁴:

Ս. Համաժամանակյա տարաբժեքություն անականների

քիմասային տարաբժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Եր., 1996, էջ 36-83:

³ Տե՛ս **Խաչատրյան Լ.Մ.**, Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, էջ 119-126:

⁴ Անականների անանցական կաղապարներում անանցների իմաստային նշանակությունների մասին տե՛ս **Զահուկյան Գ.Բ.**, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Եր., 1989, էջ 197-198:

Իմաստային կառուցվածքում

Ժամանակակից հայերենում կան զգալի թվով ածական անուններ, որոնք իրենց իմաստային կառուցվածքում համատեղում են հարաբերական և որակական ածականներին հատուկ նշանակություններ⁵:

Այդ կարգի ածականների իմաստային կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ներկարգային իմաստային փոփոխությունները տեղի են ունեցել տարբեր գործոնների ազդեցության հետևանքով:

Դիտարկելով *երկայթյա* -1. երկայթե (հարաբ.), 2. փխբ. ամուր, պինդ (որ.), *անսանձ* – 1. սանձ չունեցող (հարաբ.), 2. փխբ. անգուսպ, կատաղի (որ.), *առասպելական* – 1. առասպելին հատուկ (հարաբ.), 2. փխբ. մտացածին (որ.), *անլեղի* – 1. առանց լեղիի (հարաբ.), 2. փխբ. վախկոտ (որ.), *կապարային* – 1. կապարե (հարաբ.), 2. փխբ. ճնշող, ծանր (որ.) և այլ բառերի իմաստային կառուցվածքները՝ նկատում ենք, որ դրանց երկրորդ նշանակությունը պայմանավորված է փոխաբերական գործածության հանգամանքով:

Այնուհետև քննարկելով *մարդկային* – 1. մարդուն վերաբերող (հարաբ.), 2. բարի, վեհ (որ.), *գրքային* – 1. գրքին՝ գրավոր խոսքին վերաբերող (հարաբ.), 2. շինծու, արհեստական (որ.), *տարրական* – 1. նախնական գիտելիքներ տվող (հարաբ.), 2. հասարակ, պարզ (որակ.) և այլ ածականների իմաստները՝ կարելի է եզրակացնել, որ դրանց որակական նշանակությունը լրացուցիչ իմաստավորում է, որ առաջացել է ածականի հարաբերական տեսակի վերաիմաստավորման հետևանքով:

Համեմատելով առաջին և երկրորդ խմբերի ածականների իմաստային նշանակություններն ու դրանց ձևավորման գործոնները՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ նախ՝ այդ բառերը գործառվում են ժամանակակից հայերենում, երկրորդ՝ դրանց երկատված նշանակություններն իրար հարաբերակից են, երրորդ՝ որոշ դեպքերում տարարժեքությունը պայմանավորված է փոխաբերացման կամ վերաիմաստավորման գործոններով:

Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում վեր հանել երևույթի պատճառակցական հիմքերը կամ գործոնները և, ըստ այդմ, բացատրել ածականի ներկարգային տարարժեքություն պայմանավորող հանգամանքները:

Այդ կարգի բառերի վերաբերյալ կատարելով իմաստագործառական քննություն՝ կարելի է հիմնավորել ներկարգային տարարժեքություն պայմանավորող հետևյալ գործոնները՝ փոխաբերացում և վերաիմաստավորում:

⁵ Որակական և հարաբերական ածականների իմաստային որոշակի ընդհանրությունների մասին տե՛ս **Աբրահամյան Ս.Գ., Պատնայան Ն.Ա.** և ուրիշներ. Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Ձևաբանություն, Եր., 1974, էջ 146:

1. **Փոխաբերացման գործոնով** պայմանավորված՝ հարաբերական ածականները կարող են ձեռք բերել նաև որակականի նշանակություն և շարահյուսական մակարդակում հանդես գալ տարբեր կարգային նշանակություններով:

Դիտարկենք այդ կարգի բառերի իմաստային առումները.

արմատական – 1. (բառերի) արմատներին վերաբերող (հարաբ.). *արմատական* բառարան, 2. փխբ. խորքային, սկզբունքային, հիմնական (որ.). *արմատական* փոփոխություններ,

նյարդային – 1. նյարդերին վերաբերող (հարաբ.). *նյարդային* հիվանդություն, 2. փխբ. զայրացկոտ (որ.). *նյարդային* վերաբերմունք,

բանաստեղծական – 1. բանաստեղծությանը հատուկ (հարաբ.). *բանաստեղծական* ոտք, 2. փխբ. նուրբ (որակ.). *բանաստեղծական* ոգի,

դրամատիկական – 1. դրամային վերաբերող (հարաբ.). *դրամատիկական* երկ, 2. փխբ. ծանր, անտանելի որակ.). *դրամատիկական* վիճակ,

ողբերգական – 1. ողբերգության հատուկ (հարաբ.). *ողբերգական* ժանր, 2. փխբ. ողբալի, սգալի (որակ.). *ողբերգական* կերպար,

ներվային – 1. ներվերին հատուկ (հարաբ.). *ներվային* հիվանդություն, 2. փխբ. բռնկվող, չհանդուրժող (որակ.). *ներվային* բնավորություն,

փողոցային – 1. փողոցին հատուկ (հարաբ.). *փողոցային* երթևեկություն, 2. փխբ. անբարո (որակ.). *փողոցային* վերաբերմունք,

տիեզերական – 1. տիեզերքին հատուկ (հարաբ.). տիեզերական հրթիռ, 2. փխբ. հանրահոչակված, անսահման մեծ (որակ.). *տիեզերական* ոգի և այլն:

2. **Վերաիմաստավորման գործոնով** պայմանավորված՝ բառերի իմաստային կառուցվածքում տեղի է ունենում նոր նշանակության հավելում, որ դիտվում է բառի նախնական նշանակության ծավալային ընդլայնում: Այլ մտեցումով՝ այն կարելի է համարել բառիմաստի ընդլայնման հետևանք, սակայն մենք նպատակահարմար ենք համարում այն անվանել վերաիմաստավորում:

Այդ կարգի բառերից են՝

ռեալիստական -1. ռեալության հատուկ, ռեալիզմին հետևող (հարաբ.). *ռեալիստական* ուղղություն, 2. ռեալիզմի սկզբունքներին համապատասխանող (որակ.). *ռեալիստական* գրող,

ժողովրդական -1. ժողովրդից բաղկացած, ժողովրդին հատուկ (հարաբ.). *ժողովրդական* զանգված, 2. ժողովրդի հոգեբանության՝ ոգուն՝ մտայնությանը համապատասխանող (որակ.). *ժողովրդական* նկարիչ,

հարվածային – 1. հարված հասցնող, հարվածի համար նախատեսված (հարաբ.). *հարվածային* գործիք(ներ), 2.մեծ լարվածություն պահանջող (որակ.). *հարվածային* աշխատանք,

մարդկային – 1. մարդկանցից բաղկացած (հարաբ.). *մարդկային* հասարակություն, 2. մարդուն վայել, մարդավարի (որակ.). *մարդկային* վերաբերմունք,

քնարական – 1. քնարերգությանը՝ լիրիկային վերաբերող (հարաբ.). *քնարական* բանաստեղծություն, 2. հուզական, հուզիչ (որակ.). *քնարական* հոգի և այլն:

Դիտարկված բառերի իմաստների համեմատությունն ու հակադրությունը ցույց են տալիս, որ որոշ հարաբերական ածականներ արտահայտում են նաև որակականի հատկանիշներ՝ ցուցաբերելով ներխոսքիմասային (ներկարգային) տարաբեքություն. որակական իմաստը բառի երկատված հարաբերական նշանակության զարգացման հետևանք է:

Վկայված բառակապակցական օրինակների քննարկման ճանապարհով պարզ է դառնում, որ թե՛ հարաբերական և թե՛ որակական ածականների շարքին դասվող հատկանշային բառերի իմաստային բաշխումը կատարվում է խոսքաշարում. այդ բառերն արդի հայերենում հանդես են գալիս մերթ որպես հարաբերական, մերթ որպես որակական ածականներ: Ուստի այդ կարգի բառերը համարվում են *համաժամանակյա տարաբեք բառեր և հատկանշվում են տեղաշարժերի մասնակի բնույթով*:

Բ. Տարժամանակյա տարաբեքություն ածականների իմաստային կառուցվածքում

Ժամանակակից հայերենում կան որոշակի ածականներ, որոնց հարաբերական և որակական նշանակությունները բաշխվում են լեզվի տարբեր գոյավիճակների շրջանակներում. լեզվի տարժամանակյա կտրվածքում դրանք դիտվում են ներկարգային տարաբեք բառեր: Այդ կարգի բառերը արդի հայերենին են փոխանցվել հին հայերենի բառային կազմից. հին հայերենում դրանք ունեն հարաբերական ածականի նշանակություն: Լեզվի պատմական զարգացման ընթացքում դրանց բառիմաստները ենթարկվել են զանազան փոփոխությունների, որոնց հետևանքով նրանց իմաստային կառուցվածքից հարաբերական նշանակությունը դուրս է եկել, և դրա փոխարեն զարգացել է որակական նշանակություն:

Ներկարգային այդօրինակ տեղաշարժերը հնարավոր է բացահայտել՝ համեմատելով այդ բառերի գրաբարյան և արդիհայերենյան բառիմաստները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ածականի ներսում ներկարգային այդպիսի տեղաշարժերն ընթացել են հարաբերական ածականի

հիմքում եղած նյութական (առարկայական) բառիմաստի վերացարկման և հիմքի կամ արմատի մթագնման ուղիներով⁶:

1. **Բառերի նյութական իմաստի վերացարկման** գործոնով պայմանավորված՝ հարաբերական ածականի հիմքում ընկած առարկայական նշանակությունը (գոյականական հիմքը) ժամանակի ընթացքում կարող է վերացարկվել՝ գրկվելով նյութական նշանակությունից: Այդ գործընթացը կարող է հանգեցնել նրան, որ ածականը հարաբերական տեսակից անցնի նոր՝ որակական նշանակության:

Բնականաբար այդ կարգի բառերի իմաստային անցումներն ու տարաբժեքությունը պետք է դիտարկել գրաբարի և աշխարհաբարի լեզվական նյութի համեմատության համատեքստում:

Այսպես, գրաբարի բառային կազմում *կախարդական, աստվածային, մոգական, դիվական, դիվային, դժոխական, դժոխային* ածականներն ունեն հարաբերականի կարգային նշանակություն⁷, մինչդեռ արդի հայերենում դրանք արտահայտում են որակականի տեսակային նշանակություն: Հմմտ.

Աստուածային – «Աստծուն պատշաճող՝ վայելող» (հարաբ.) – Մատենից *աստուածայնոց* (ՆՀԲ, 1, 526): Նորից երգում-մորմոքում է *աստվածային* Կոմիտասը. Ուրիշներին գինու կարաս, մեզ հերիք է քո մի թասը (ՊՍ, Ա, 201) – (աստծու նման բացառիկ ձիրք ունեցող) – որակ.:

Դժոխային – «դժոխքին հատուկ՝ վերաբերող» (հարաբ.) – *Դժոխային* գործովք գրաւեալս՝ ի լոյսն (ՆՀԲ, 1, 616): Ճանապարհն այս *դժոխային* կարող էր և անվերջ տևել (ՊՍ, Դ, 194) – (չափազանց ծանր, տաժանելի) – որակ.:

Դիական – «դևերին հատուկ՝ վերաբերող» (հարաբ.)– Որ *գրիական* գունդսն (զլեգեոն դիւաց) ընկղմեցեր ի տարտարոսն (ՆՀԲ, 1, 628): Օլիմպիայի խաժ աչքերում ինչ-որ *դիվական*, դավաճան բան կար (ԴԴ) – (չար, նենգ) – որակ.:

Դիային – «դևերին հատուկ՝ վերաբերող» (հարաբ.) – *Դիային* բազմաստուածութեան նուէրք (ՆՀԲ, 1, 628: Նրա նիհարած դեղնած դեմքը ցույց էր տալիս, որ նա կատարում է *դիվային* ծանր գործ (ԴԴ) – (խիստ ծանր, դժվարին) – որակ.:

Կախարդական – «կախարդներին՝ կախարդությանը հատուկ» (հարաբ.) – *Կախարդական* արուեստ (ՆՀԲ, 1, 1034): Ծաղիկը էն *կախարդական* դռնից ներս է մտնում թե չէ, դուրս է գալիս մի դրախտային այգի (ՀԹ) – (ոչ երկրային, զարմանահրաշ) – որակ.:

⁶ Տե՛ս **Խաչատրյան Լ.Մ.**, Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, էջ129-130:

⁷ Այստեղ չենք դիտարկում այն հանգամանքը, որ այդ ածականների մի մասը գրաբարում ևս ուներ որակականի նշանակություն:

Մոզական – «մոզերին՝ մոզությանը հատուկ» (հարաբ.) – Ետես *մոզական* կախարդութեանն զօրութեամբ (ՆՀԲ, 2, 192): Ռուստամի երգը մի *մոզական* զօրությամբ ազդեց պարոն Աշխարհունու վրա (Բաֆֆ.) – (կախարդական, դյուրական) – որակ.:

2. Հիմքի (արմատի) մթագնման հետևանքով հարաբերական ածականները կարող են անցնել որակականի. արդի հայերենում այդ կարգի բառերի հիմքի իմաստը մթագնել է, այդ հիմքերը նախկին իմաստով չեն գիտակցվում, որի հետևանքով փոխվել է նաև դրանց առարկայական հարաբերության իմաստը, և բառերն անցել են որակական ածականների շարքը: Դիտարկենք այդ կարգի բառերի հիմքերի գրաբարյան և արդիհայերենյան իմաստները:

Բնական – «բնությանը հատուկ, բնությունից առաջ եկած». Ջորէսնս յաւելուած *բնականացն* արարեալ (ՆՀԲ, 1, 495)- հարաբ.: Արդի հայերենում *բուն* արմատը «բնություն» իմաստով չի գիտակցվում. Բայց դա նույնքան *բնական* է, որքան այն հարցը, թե ո՞վ ենք մենք՝ նախրցիներս (ԵՉ, 198)- (իրական)-որակ.:

Դյուցազնական – «դյուցազուններին հատուկ». *Դիւցազնական* օրէնք (ՆՀԲ, 1, 636)-հարաբ.: Արդի հայերենում *դյուցազն* արմատը *աստվածների ծնունդ* իմաստով չի գիտակցվում. Մեր աշխատանքը *դյուցազնական* նրան թվում էր սին մի երագ (ԵՉ) – (հերոսական, սխրանքի արժանի) -որակ.:

Տարրական – «տարրերից բաղկացած». Ամենայն *տարրականացն* նիւթք (ՆՀԲ, 2, 858)-հարաբ.: Արդի հայերենում *տարր* արմատը *նյութ* իմաստով չի գիտակցվում. Կարո՞ղ են նրանք հասկանալ արդյոք... թեկուզ *տարրական* մի միտք (ԵՉ)-(պարզ, պարզունակ)-որակ.:

Առաքելական – «առաքյալների ձևով եղած». Իբրեւ ընդ ամուր պարսպաւ պահէ զնոսա իւրով *առաքելական* զօրութեամբն (ՆՀԲ, 1, 297): Արդի հայերենում *առաքել* (առաքեալ) հիմքը «(Աստծու կողմից) ուղարկված» իմաստով չի գիտակցվում. (Պարզ է, որ) քրիստոնեությունը տարածելու *առաքելական* ոգին չէր, որ մղում էր նրանց դեպի Հայաստան (Բաֆֆ.)- (առաքյալներին հատուկ)-որակ.:

Պարթևական – «պարթևներին (պարթևների ազգին) հատուկ». Ջբնակութիւն *պարթեւական*՝ զձեր սեպհական պահլան ի ձեզ դարձուցից (ՆՀԲ, 2, 635): Արդի հայերենում *պարթև* արմատը «Պարթևների ցեղանուն» իմաստով չի գիտակցվում. Այդ ինչքան էս մեծացել. *պարթևական* ի՛նչ հասակ (ԱԻ) – (հաղթանդամ)- որակ.:

Բսկական – «ինքն իրեն գոյացած». *Բսկական* որդին Աստուծոյ եղեալ ըստ ժամանակին և որդի մարդոյ (ՆՀԲ, 1, 868): Արդի հայերենում *իսկ* արմատը «բուն, հատուկ» իմաստով չի գիտակցվում. *Բսկական* մարմին ստացած՝ կանգնեց խանդավառ Նաիրին (ԵՉ)-(իրական)-որակ.:

Եղերական – «եղեռնին՝ չարագործությանը հատուկ»։ Եւ ոչ եղերականք ջայլից ... կանանց լավականք (ՆՀԲ, 1, 654)⁸։ Արդի հայերենում *եղեր* (եղեռն) հիմքը «սպանդ» իմաստով չի գիտակցվում։ Եվ կան անձայն գրքեր, որ լռին սրսկում են սիրտը *եղերական* կրքեր (ԵՉ)-(ողբալի, ցավագին) –որակ.:

Քերթողական – «քերթողներին՝ քերթությանը հատուկ»։ Ոչ երբեք թշնամենալ ընդ առն *քերթողականի* (ՆՀԲ, 1, 1004)։ Արդի հայերենում *քերթող* հիմքը «քերթողական արվեստի գիտակ. քերական» իմաստներով չի գիտակցվում։ Ո՛, ճարտար ճորտեր մեր քերթության, Եղել էք ակունքը իսկական մեր նոր արվեստի *քերթողական* (ԵՉ) - (բանաստեղծական) – որակ.:

Արարչական – «արարչին հատուկ՝ վերաբերող»։ *Արարչական* մարդասիրութիւն (ՆՀԲ, 1, 340)։ Արդի հայերենում *արարիչ* հիմքը «Աստված» իմաստով չի գիտակցվում։ Ծեր գգրարների ու մագմանների երգեցիկ զարկեր՝ Մի *արարչական* նվագ... (ՊՍ)- (աստվածային)-որակ.:

Հաւանական - «համոզիչ, հրապուրիչ»։ Քահանայական շնորհի *հաւանական* կամօք արժանի լինել (ՆՀԲ, 2, 72)։ Արդի հայերենում *հաւան* արմատը «համաձայն» իմաստով չի գիտակցվում։ Ոչ ոք *հավանական* խոսք չէր ասում (ՍԶ) – (ճշմարտանման, խելքին մոտ) – որակ.:

Սովորական – «սովորություն եղած»։ Նկուն եղեալ՝ գտաւ ի ներքոյ քան *զսովորական* բնութիւն (ՆՀԲ, 2, 730)։ Արդի հայերենում *սովոր* արմատը «ծանոթություն» իմաստով չի գիտակցվում։ Եվ այդ հին երկրում ապրում են այսօր շատ *սովորական* մարդիկ՝ *սովորական* մարդու *սովորական* հասկություններով (ԵՉ, 299)։

Հական – «ինքն իրեն գոյացած, Աստծու ձեռքով ստեղծված»։ Մի է պատճառ ամենեցուն, և նոյն *հական*, և մշտնջենաւոր (ՆՀԲ, 1, 758)։ Արդի հայերենում *Հ* արմատը «գոյություն» իմաստով չի գիտակցվում։ Դու՛ 20-րդ և, անտարակույս, հոբեյանական, Դու՛ հյուլեական, կարծես *հական*, Եվ ավելի քան կարծես բանական (ՊՍ, Բ, 105) –(էություն կազմող) – որակ.:

Հայերենի զարգացման համապատկերի շրջանակներում այդ կարգի բառերը համարվում են *տարժամանակյա տարաբժեք բառեր և հատկանշվում են տեղաշարժերի լիակատար բնույթով*։

Այսպիսով, դիտարկելով ածական անվան ներխոսքիմասային տարաբժեքության երևույթը՝ կարելի է եզրակացնել.

ա) տարաբժեքությունը ձևավորվում է ժամանակային երկու կտրվածքներում՝ համաժամանակյա և տարժամանակյա,

⁸ *Եղեռնական* ածականը ժամանակակից հայերենում պահպանում է արմատի նախնական՝ նյութական նշանակությունը, հմմտ. Ղողանջ *եղեռնական* (ՊՍ, Դ, 184)։

- բ) ներխուսքիմասային տարարժեքությունը, անկախ ժամանակային գործոններից, ունի իր պատճառակցական հիմքերը կամ գործոնները,
գ) համաժամանակյա տարարժեքության դեպքում կարևորվում են փոխաբերացման և վերաիմաստավորման գործոնները,
դ) տարժամանակյա տարարժեքության դեպքում կարևորվում են բառերի նյութական իմաստի վերացարկման ու հիմքի (արմատի) մթագնման գործոնները:

Համառոտագրություններ

ԱԻ – Ավ.Բասիակյան, *Երկեր, Եր.*, 1955:

ԴԴ – Դ.Դեմիրճյան, *Վարդանանք, հ. 1, Եր.*, 1968:

ԵԶ – Ե.Չարենց, *Ընտիր երկեր, Եր.*, 1955:

ՀԹ – Հովհ. Թումանյան, *Երկերի ժողովածու, հհ. 1-4, Եր.*, 1969:

ՆՀԲ – Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հհ. 1-2, *Վենետիկ, 1836-1837:*

ՊՍ – Պ.Սևակ, *Երկերի ժողովածու, հհ. 1-4, Եր.*, 1972-1973:

ՍԶ – Ստ. Ջորյան, *Երկերի ժողովածու, հ. 1., Եր.*, 1960:

Բաֆֆ.- Բաֆֆի, *Երկերի ժողովածու, հ. 2, Եր.*, 1983:

ВНУТРИЧАСТЕРЕЧНАЯ ПОЛИСЕМИЯ В СМЫСЛОВОЙ СТРУКТУРЕ ПРИЛАГАТЕЛЬНЫХ

Хачатрян Л.М., Мирумян М.В.

Ключевые слова: *внутричастеречные переходы, полисемия, полисемия синхроническая, полисемия диахроническая, частные сдвиги, полные сдвиги.*

Статья посвящена явлению внутричастеречной полисемии в смысловой структуре прилагательных, которая характеризуется срезами синхронии и диахронии.

а/ При синхронической полисемии прилагательные совмещают разные лексические значения в рамках одного и того же этапа развития языка. В этом процессе важное значение имеют факторы метафоризации и переосмысления.

б/ При диахронической полисемии прилагательные из ряда относительных переходят в ряд качественных в разных этапах развития языка. В этом процессе важную роль имеют факторы абстрагирования материального значения слова и затемнение значения основы (корня).

Синхроническая полисемия носит частный характер сдвигов, а диахроническая полисемия – полный характер.

MORPHOLOGICAL POLYSEMY IN THE SEMANTIC
STRUCTURE OF ADJECTIVES

Khachatryan L.M., Mirumyan M.Y.

Key words: *morphological shifts, polysemy, simultaneous polysemy, consecutive polysemy, entire shifts, partial shifts.*

The morphological polysemy of adjectives is formed in two time patterns, which are classified as simultaneous and consecutive. These time patterns are based on certain factors:

a) In case of simultaneous polysemy the adjectives combine different orderly meanings in the same linguistic condition, in the process of which the factors of metaphorization and re-interpretation are highlighted.

b) In case of consecutive polysemy the adjectives shift from the relative type into the qualitative one in different linguistic conditions. The factors of the loss of the word meaning and obscuration of the root are highlighted in this process.

The simultaneous polysemy is characterized by partial shifts, while the consecutive polysemy is characterized by entire shifts.

R e f e r e n c e s

1. **Abrahamyan S.G.**, Parnasyan N.A., Ohanyan H.A., Jamanakakiz hayoz lezu, h.2, Ye., «Izd. GA», 1974 (**In Armenian**).
2. **Jahukyan G.B.**, Jamanakakiz hayoz lezvi imastabanutyun ev barakazmutyun, Ye., «Izd. GA», 1989 (**In Armenian**).
3. **Khachatryan L.M.**, Texasharjer bareri dzevabanakan imasti mej, Ye., «Izd. lujs», 1985 (**In Armenian**).
4. **Khachatryan L.M.**, Khosqimasayin tararjequtjunn ardi hayereni kayun kapakzutyunnerum, Ye., «Izd. GA», 1996 (**In Armenian**).
5. **Khachatryan L.M.**, Lezvabanutyun nerazutyun, Ye., «Izd. Zangak», 2008 (**In Armenian**).

Ընդունվել է՝ 18.10.2019
Գրախոսվել է՝ 25.10.2019
Հանձնվել է տպ.՝ 20.11.2019

Տեղեկություն հեղինակների մասին

Լայիկ ԽԱՉԱՏՐՅԱՆ՝ բան. գիտ. դոկտոր., պրոֆեսոր,

Խ.Արմավյանի անվ. ՀՊՄՀ-ի լեզվաբանական հետազոտությունների
լաբորատորիայի տնօրեն, էլ. փոստ՝ lingualal51@mail.ru.

Մարգուշ ՄԻՐՈՒՄՅԱՆ՝ մանկ. գիտ. թեկնածու., դոցենտ,

Խ.Արմավյանի անվ. ՀՊՄՀ-ի դոցենտ, էլ. փոստ՝ mirumyan1951@mail.ru